*թէ[2]՝ «Նա[3] է Աստուած ճշմարիտ եւ կեանք յաւիտենական[4]»: Եւ ի կաթուղիկէական[5] ի Յուդայեան[6] թղթին ասէ. «Միոյն[7] Աստուծոյ եւ Տեառն մերոյ[8] Յիսուսի Քրիստոսի վայելէ փառք յաւիտեանս. ամէ՛ն[9]»: Եւ Պաւղոս[10] ի[11] Գաղատացւոց[12] թղթին ասէ ի սկզբանն[13], թէ՝ «Պաւղոս՝[14] առաքեալ ո՛չ ի մարդկանէ եւ ո՛չ ի ձեռն մարդոյ[15], այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի[16]»: Եւ ի ներքսագոյն ասէ[17]. «Ցուցանեմ ձեզ, եղբա՛րք, զԱւետարանն, զի ես[18] ո՛չ ի մարդոյ[19] առի եւ ո՛չ[20] ուսայ[21] յումեքէ, այլ ի Քրիստոսէ Յիսուսէ[22]»: Եւ ի Հռովմայեցւոց[23] թղթին ասէ. «Ըստ մարմնոյ[24], որ է ի վերայ ամենայնի՝ Աստուած աւրհնեալ յաւիտեանս[25]»:*

*Այս է[26] ճշմարիտ միութիւն Աստուածութեան[27] եւ մարդկութեան[28] անբաժանաբար[29], եւ ո՛չ երկուութիւն[30] բաժանաբար[31] հակառակ միմեանց[32], որոշելով զախտականն[33] յանախտականէն՝ ըստ անջատման ի միմեանց[34] չար աղանդոյն[35] Քաղկեդոնի, որ զԵրրորդութիւնն դաւանեալ՝ չորրորդութիւն խոստովանին[36] ըստ անիծեալ տումարին[37] Լեւոնի, եւ երկուութիւնս[38] խոստովանեալ՝ ասեն. «Այլ, որ յԱստուծոյ[39], եւ այլ, որ ի Մարիամայ[40], այլ՝ աստուածութիւնն, եւ այլ՝ մարդկութիւնն, յատուկք եւ զանազանք ի միմեանց»: Վասն որոյ՝ նզովեալ խոստովանութիւնն ինքեամբք հանդերձ[41]:*

---

1 e *Յօհաննէս*, m *Յովհաննէս* փխ *Յովհաննէս* (aii$_1$)

2 e չիք *թէ* (aii$_1$m)

3 a *Սա*, ii$_1$m *Սայ* փխ *Նա* (e)

4 aii$_1$m *յաւիտենականք* փխ *յաւիտենական* (e) (e-ի լուսանցքում նշուած է նաեւ այս մէջբերման տեղը՝ *1.Յօհ 5.20*)

5 e *կաթուղիկէի*, i$_1$ *կաթողիկէական* փխ *կաթուղիկէական* (aim)

6 e *Յուդայի* փխ *Յուդայեան* (aii$_1$m)

7 aii$_1$m *Միայն* փխ *Միոյն* (e)

8 e չիք *մերոյ* (aii$_1$m)

9 e չիք *ամէ՛ն* (aii$_1$m) (e-ի լուսանցքում նշուած է այս մէջբերման տեղը՝ *Յուդայ 25 հմր*)

10 i *Պողոս*

11 e չիք *ի* (aii$_1$m)

12 m *Գաղատացոց*

13 m *սկզբան* / e *ի սկզբանն ասէ* փխ *ասէ...սկզբանն* (aii$_1$m)

14 i *Պողոս*

15 m *մարդո* / i *մարդւոյ*

16 e-ի լուսանցքում նշուած է նաեւ այս սուրբգրային մէջբերման տեղը՝ *Գղտ 1.1*:

17 e *դարձեալ* փխ *ի ներքսագոյն ասէ* (aii$_1$m)

18 e *իմ, զոր* փխ *զի ես* (aii$_1$m)

19 m *մարդո*

20 e *կամ* փխ *ո՛չ* (aii$_1$m)

21 i *ուսա*, i$_1$m *յուսա* փխ *ուսայ* (ae)

22 m *Յիսուսի* փխ *Յիսուսէ* (aeii$_1$) (e-ի լուսանցքում նշուած է նաեւ այս մէջբերման տեղը՝ *[Գղտ] 1.11*):

23 a *Հռովմայական*, ii$_1$m *Հռոմայական* փխ *Հռովմայեցւոց* (e)

24 m *մարմնո*

25 m *յաւիտեանս. ամէ՛ն* (aeii$_1$) (e-ի լուսանցքում նշուած է նաեւ այս մէջբերման տեղը՝ *Հռոմ 9.5*):

26 m չիք *է* (aeii$_1$)

27 e *Աստուածութիւն* փխ *միութիւն Աստուածութեան* (aii$_1$m)

28 e *մարդկութիւն* փխ *մարդկութեան* (aii$_1$m)

29 am *անբարժանաբար* փխ *անբաժանաբար* (eii$_1$) (այստեղ i$_1$-ի գրիչը սկզբում գրել, ապա խնամքով մաքրել է առաջին *ր*-ն):

30 aii$_1$m *երկութիւն* փխ *երկուութիւն* (վերականգնում՝ ըստ յաջորդ հատուածների):

31 am *բարժանաբար* փխ *բաժանաբար* (ii$_1$)

32 ii$_1$m *ի միմեանս* փխ *միմեանց* (a)

33 m *զախտական* փխ *զախտականն* (aii$_1$)

34 ii$_1$m *միմեանս* փխ *միմեանց* (a)

35 i$_1$ *աղանդոյն*

36 m *խոստովանեալ* փխ *խոստովանին* (aii$_1$) (i$_1$-ի գրիչը եւս սկզբում գրել է *խոստովանեալ*, սակայն յետոյ խնամքով մաքրել է վերջին երեք տառերը եւ աւելացրել *ին* վերջաւորութիւնը):

37 i *տօմարին*

38 a *Բ բնութիւնս*, ii$_1$m *երկութիւնս* փխ *երկուութիւնս* (վերականգնում՝ ըստ յաջորդ հատուածների)

39 m *Աստուծոյ* փխ *յԱստուծոյ* (aii$_1$)

40 i$_1$m *Մարիամա*

41 e *որպէս երկաբնակքնն* փխ *երկուութիւն բաժանաբար...հանդերձ* (aii$_1$m) (տասներեք տող)